

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԳԱ ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԿԵԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿADEMİCİAN

Գրադական համար V

1950

Ելույթ V

Փ. Գ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ԵՎ Ա. Գ. ԱԵՎՈՅԱՆ

ՀԱՅԻ ԽՄՈՐԻ ԵՎ ԹԹԻՄՈՐԻ ՄԻԿՐՈՑԼՈՐԱՅԻ
ՄԱՍԻՆ

Վաղուց նշված է, որ մենք ուշագրությունը չենք գարձնում ամենաուշագրավ փոստերի վրա միայն նրա համար, որ նրանք շափազանց սովորական են: Արդյոք շատերից մեջ կարող է առաջանալ այն միտքը, որ ցորենի մի կտոր լավ թխված հացը հանդիսանում է մարդկային մտքի ամենախոշոր դյուտերից մեկը:

Կ. Ա. ՏԻՄԻՐՅԱԶԵՎ

Հայաթիւման արտագրությունը միաժամանակ իր հիմքում հանդիսանում է քիմիական և միկրոբիոլոգիական պրոցեսների կոմպլեքս: Այս ունգությամբ, մասնավորապես հացի խմորման բիոֆիմիական և միկրոբիոլոգիական հասուլությունների ուսումնասիրման բնագավառում, Օստրովսկու, Նիկոլաևի, Պլոտնիկովի, Սելիբերի և ուրիշների կողմից կատարվել են մի շարք օրիգինալ աշխատանքներ (Նիկոլաև, 1937; Օստրովսկի, 1948; Պլոտնիկով, 1940; Սելիբեր, 1936): Մի շարք գիտահետազոտական հիմնարկների (Հայահատիկի Համամիութենական Ինստիտուտ, Բուսաբուծության Համամիութենական Ինստիտուտ) կողմից կատարված աշխատանքները պարզել են, որ Սովետական Միության հացահատիկը սպիտակուցների պարունակությամբ աշխարհում առաջին է գրավում: Հստ ակադեմիկոս Օպարինի՝ հացի պատրաստման տեխնիկայում առաջնային դերը պատկանում է ֆերմենտացին ու ակացիխաներին: Որքան լավ են ուսումնասիրված հացաթիւման տեխնոլոգիական ու բիոքիմիական պրոցեսները (Առելման—Այերման, 1946, 1948; ՎНИИХՊ, 1943; Կրետովիչ—Կրետովիչ, 1948), այնքան էեւ շատ քիչ ուսումնասիրություններ են կատարված հացաթիւման միկրոֆլորայի վերաբերյալ (Նիկոլաև, 1932, 1937; Պլոտնիկով, 1940): Այդուղիւթյամբ մենք ուսենք միայն Նիկոլաևի աշխատանքները: Ելնելով գրանից՝ Հայկական ՍՍԻ Գիտությունների Ակա-

դեմիայի Միկրոբիոլոգիայի սեկտորը, զեռ Հայրենական պատերազմի տարիներին, սկսեց զբաղվել Հայկական ՍՍՌ-ի տարրեր շրջանների հացի թթվամորների միկրոֆլորայի ուսումնասիրությամբ։ Մեր աշխատանքների արդյունքները (Սարուխանյան—Կարսանյան, 1946) ցույց են տվել, որ զանազան էկոլոգիական պայմաններում գտնվող շրջանների թթվամորների միկրոֆլորան շատ բազմազան է։ Այդ պատճառով էլ թթվամորի միկրոֆլորայի ուսումնասիրության համար մենք հետազոտում ընտրել ենք Հայստանի տարրեր աշխարհագրական գոնաներում տեղափորված շրջանները (Ապարան, Ախտա, Սևան, Նոր Բայազետ, Դիլիջան, Իջևան, Թալին, Աշտարակ)։

Բոլոր շրջաններում կազմակերպված դիտական էքսպերիմենտական հացի խմորի ու թթվամորի նմուշները վերցվել են շրջանային փոերից և կոլորդնիկներից։ Այդ նմուշները դիտական էքսպերիմենտական համար միկրոբիոլոգիայի պայմաններում միկրոբիոլոգիական հետազոտության են ենթարկվել համապատասխան սննդանյութերի վրա, ապա փոխադրվել են Երևան՝ հետագա խորը ուսումնասիրության համար։ Հացի խմորի հասունացման պրոցեսն ուսումնասիրելու համար մենք միկրոբիոլոգիական հետազոտություններ ենք կատարել Սևանի և Նոր Բայազետի հացի գործարաններում օգտագործվող ալյուրի, թթվամորի, խառնուրդի, հացաթխման համար պատրաստ խմորի և հացի նմուշներում Նմուշներում որոշվել է միկրոօրգանիզմների ընդհանուր քանակը՝ մսապեպտոն-ագարի վրա, շաքարասնկերի ընդհանուր քանակը՝ գարեջրի քաղցուի ագարի վրա, թթու գոյացնող բակտերիաների ընդհանուր քանակը՝ գարեջրի կավճու քաղցուի ագարի վրա և կաթնաթթվային բակտերիաների քանակը կաթի մեջ։

Հետազոտվել են նաև հիշյալ շրջանների կոլորդնիկների կողմից օգտագործվող թթվամորները, որոնք, ըստ ալյուրի որակի և թթվամորի հասակի, իրարից խիստ տարբերվում են։ Թթվամորի տիպիկ շաքարասնկերը մեկուսացվել են մեկ գաղութից համապատասխան սննդանյութի վրա և տեղափոխվել լարութառիան հետագա ուսումնասիրության համար։ Միկրոբիոլոգիական հետազոտման համար վերցվել են ցորենիկ գարու ալյուրից պատրաստված խմորի նմուշներ՝ միկրոօրգանիզմների զարգացման վրա հում նյութի որակի ազդեցությունը պարզելու նպատակով։ Հե-

տազութեալ թյունների արդյունքներն ամփոփված են առաջին և երկրորդ աղյուսակներում¹:

Միկրոբիոլոգիական հետազոտությունների տվյալներից պարզվում է, որ Սևանի հացի զործաբանում ցորենի ալյուրից պատրաստված խմորի արտադրության պրոցեսում (աղյուսակ 1) մեկ կ խմորի մեջ եղած միկրոբանիդմների ընդհանուր քանակը, համեմատած շաքարասնկային բջիջների հետ, երեք անգամ ավելի է, խառնուրդի մամենախին՝ ատա անգամ, իսկ պատրաստի խմորի մեջ, այսինքն, մինչև թխելը՝ 12 անգամ։ Հացաթխման առանձին էտապներում շաքարասնկերի և միկրոբանիդմների քանակը նույնպես որոշ փոփոխության է ենթարկվում, այսպես, օրինակ՝ հացի թխման մամենախին շաքարասնկային բջիջների քանակը 2,4 անգամ ավելի է, քան խմորի խառնուրդ պատրաստելու պահին, իսկ միկրոբանիդմների քանակը՝ 2,1 անգամ։

Աղյուսակ 1

Սևանի հացի զործաբանի խմորի միկրոֆլորան

Արտադրության ընթացքը	Հետազոտվող նմուշների քանակը	Միկրոբանիդմների քանակը և դրամի մեջ (միկրոններով)		
		Բակտե- րիաներ	Շաքարա- սնկեր	Կաթնաթթվ- պային քակ- տերիաներ
Յորինի ալյուր	.	9	2,0	Զկա
Թթվամոր	.	9	43,6	1,4
Խմորը խառնուրդի մո-	.	9	5,7	0,5
մենախին	.	9	12,4	1,2
Խմորը մինչև թխելը	.	9	Միավորներ	Զկա
Հացը փակց հանելոց	.	9		Զկա
Հետո	.			

Կաթնաթթվային բակտերիաների քանակը, համեմատած միկրոբանիդմների ընդհանուր քանակության հետ, բավական քիչ է և նրանց քանակական մեծացումը խմորի հասունացման առանձին էտապներում աննշան է։ Չնայած դրան, նրանց կենսական պրոցեսներից առաջացած քիչ քանակությամբ կաթնաթթվուն ևս մեծ չափով նպաստում է շաքարասնկերի բազմացմանը։

Ալյուրի հետազոտման ժամանակ մենք չենք հայտնաբերել շաքարասնկային բջիջներ և կաթնաթթվային բակտերիաներ։ Փոխից անմիջապես հանած հացի մեջ հաջողվել է հայտնաբերել

¹ Աղյուսակներում բերված թվական տվյալները ինը նմուշների միշտն են

Վաշ. mesentericus-ին պատկանող մի քանի տասնյակ բակտերիաներ միայն:

Դարսու ալյուրից պատրաստված խմորի մեջ, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները (աղյուսակ 2), միկրոբիոգիական պրոցեսներն ավելի ինտենսիվ են տեղի ունենում, քան ցորենի ալյուրից պատրաստված խմորի մեջ։ Բացի այդ՝ միկրոօրգանիզմներով և շաքարասնկային բջիջներով նաև ավելի հարուստ է:

Սրանով մեկ անգամ ևս հաստատվում են Նիկոլաևի (Նիկոլաև, 1932) ստացած տվյալները:

Աղյուսակ 2

Նոր Բայազետի հացի գործարանի խմորի միկրոֆլորան

Արտադրության ընթացքը	Հետազոտվող նմուշների քանակը	Միկրոօրգանիզմների քանակը 1 գրամի մեջ (միկրոններով)		
		Բակտերիաներ	Շաքարասնկեր	Կաթնաթրթվային բակտերիաներ
Գորու, ալյուր . . .	9	2,5	Զկա	Զկա
Թթվամոր . . .	9	461,0	61,3	17,3
Խմորը խառնուրդի մեջնախն . . .	9	28,5	3,3	10,3
Պատրաստի խմորը մինչև թիելը . . .	9	30,5	10,8	15,0
Հացը փոլից հանելուց հետո . . .	9	Միավորներ	Զկա	Զկա

Դարսու թթվամորի մեջ միկրոօրգանիզմների ընդհանուր քանակը շաքարասնկերի քանակից 7,5 անգամ ավելի է, իսկ խմորի խառնուրդի ժամանակ միկրոօրգանիզմների քանակը իննանգամ ավելանում է, պատրաստի խմորի մեջ՝ երեք անգամ։ Պատրաստի խմորի մեջ շաքարասնկերի քանակը մինչև թիելը համեմատած խմորի խառնուրդում եղած շաքարասնկերի քանակի հետ, 3,2 անգամ ավելի է, իսկ կողմանակի միկրոօրգանիզմների քանակը շատ քիչ է։

Դարսու և ցորենի ալյուրից պատրաստված թթվամորների ուսումնասիրություններից պարզվում է, որ շաքարասնկերի և այլ միկրոօրգանիզմների քանակը, համեմատած հացաթրթվան հաջորդ պրոցեսներից վերցված նմուշների հետ, անհամեմատ, մեծ է։ Այդ բացառարվում է նրանով, որ թթվամորը հանդիսանում է նախորդ խմորի մի մասը, որը մեկ օր մնալու գործարանում, հարստանում է միկրոօրգանիզմներով։

Աղյատակ 3

Հայկական ՍՍԾ-ի առանձին շրջանների հացի թթվամորների
միկրոֆլորան

Վերցված թթվամորի համակը և վայրը	Միկրոբանիզմերի քանակը 1 գրամի մեջ (միկրոսներով)		
	Բակական բիոներ	Թթվուառա- ջացնող բակա- ներիաներ	Շաքարա- սնկեր
Սևանի կոլխոզներից վերցված ցորենի ալյուրից պատրաստ- ված միօրյա թթվամոր	1,5	0,3	0,2
» » 15-օրյա թթվամոր	1,6	0,6	0,2
» » 3-օրյա թթվամոր	4,1	0,5	1,7
» » 3-օրյա թթվամոր	4,5	10,3	0,4
» » 3-օրյա թթվամոր	1,2	0,2	0,2
Սևանի շրջանի Ցամաքարերդ գյուղի գարու ալյուրից պատ- րաստված 3-օրյա թթվամոր	32,1	Զետ	1,9
» » 3-օրյա թթվամոր	34,5	»	20,0
Կոտրմիքի շրջանի Շոբժա գյուղ- ից վերցված գարու ալյուրից 3-օրյա թթվամոր	26,0	5,5	17,7
» » 3-օրյա թթվամոր	72,0	7,0	19,7
Ցոքենի ալյուրից պատրաստված 3-օրյա թթվամոր	4,0	0,06	0,6
Ն. Բայազետի կոլխոզի փուրց վերցված ցորենի ալյուրից 3-օրյա թթվամոր	81,0	0,08	0,03
Ն. Բայազետի կոլխոզի փուրց վերցված գարու ալյուրից 3-օրյա թթվամոր	229,0	0,05	17,9

Մենք հետազոտել ենք նաև կոլխոզների կողմից օգտա-
գործված զանազան թթվամորների միկրոֆլորան: Այդ նպատակի
համար վերցվել են տարբեր օրերի թթվամորներ՝ միօրյա, երկ-
օրյա, եռօրյա և 15-օրյա:

Ուսումնասիրության տվյալներն ամփոփված են 3-րդ աղ-
յուսակում: Ինչպես երևում է այդ նույն աղյուսակի տվյալնե-
րից, կոլխոզների կողմից օգտագործվող թթվամորի մեջ շա-
քարասնկերի և միկրոբանիզմերի քանակը ըստ խմբի համ-
սակի տեսողության փոքրանում է: Ինչպես վերեկում ասվեց,
թթվամորների միկրոֆլորայի կազմում կաթնաթթվային բակա-
րիաները քիչ են: Չնայած դրան, մենք այդ առթիվ ուսումնա-
սիրություններ կատարել ենք:

Ինչպես պարզվեց, կաթնաթթվային բակարիաներից կան
այնպիսիները, որոնք ունեն բարձր թթվություն առաջացնելու

Աղյուսակ 4

ԹՎԱՆՈՐԸ և ՏԵՂ ՀԱՅՔՆԱՐՔ ԲԱԺՄԱՆԻ ԲԱԴՄԱՆԵՐԻ ԿՐԱԳԱԼՔՈՒ Առաջացների հասկալություն և առաջացների հասկալություն հետո համապատասխան կազմություն է առաջացնելը կազմություն է առաջացնելը	ՀԱՅԱՆԻ ՀԱՅՈՒ ԱՌՋԵՐԱՅԱՀԻՑ ԵՐՂԱՆ, ԳՐԱՆ-	ՀԱՅԱՆԻ ՀԱՅՈՒ ՄԱՆԱԿՈՒ ՀԱՅԱԳՐՈՒՄ	ԹԲԿԱՐՔ. ԲԱԱԱ ՏԵՐՆԵՐ	ԿԱՅՁԵԼ ԺԱԿԱՄԱՐԿՈՒ Հ ՃԱՂԲԿԱՆԵՐ
ՍԱԿԱՆԻ ՀԱՅՈՒ ԳՈՂՋՐԱՅԱՀԻՑ » » » » »	ԽԵՆԴՐ՝ ՇԵԽԵԼՈՒՄ Առաջ առաջ ԹԲԿԱՐՆԵՐ՝ ԽԵՆԴՐ՝ ԽԵՆԴՐ	1/100.000 1/1.000.000	216—254 206—224 240	ՆԵՐՆԵՐ, 2 աքաբանձեր և ՃԱՂԲԿԱՆԵՐ » » » » »
ԽԵՆԴՐ՝ ՇԵԽԵԼՈՒՄ Առաջ առաջ ԹԲԿԱՐՆԵՐ՝ ԽԵՆԴՐ՝ ԽԵՆԴՐ	1/100.000 1/100.000	141 216	ՆԵՐՆԵՐ, 2 աքաբանձեր և ՃԱՂԲԿԱՆԵՐ » » » » »	
ԽԵՆԴՐ՝ ՇԵԽԵԼՈՒՄ Առաջ առաջ ԹԲԿԱՐՆԵՐ՝ ԽԵՆԴՐ՝ ԽԵՆԴՐ	» » » » »	94	ՆԵՐՆԵՐ, 2 աքաբանձեր և ՃԱՂԲԿԱՆԵՐ » » » » »	
» » » » »	» » » » »	394	ՆԵՐՆԵՐ, ՃԱՂԲԿԱՆԵՐ » » » » »	
» » » » »	» » » » »	158	ՆԵՐՆԵՐ, 2 աքաբանձեր և ՃԱՂԲԿԱՆԵՐ » » » » »	
» » » » »	» » » » »	103	ՆԵՐՆԵՐ, 2 աքաբանձեր և ՃԱՂԲԿԱՆԵՐ » » » » »	
» » » » »	» » » » »	104	» » » » »	
» » » » »	» » » » »	260	ՆԵՐՆԵՐ, ՃԱՂԲԿԱՆԵՐ » » » » »	
» » » » »	» » » » »	358	ՆԵՐՆԵՐ, ՃԱՂԲԿԱՆԵՐ և ՀԱՔԱՐՄԱՆԵՐ » » » » »	
» » » » »	» » » » »	310	» » » » »	
» » » » »	» » » » »	290	» » » » »	
» » » » »	» » » » »	210—250	» » » » »	
» » » » »	» » » » »	190—220	» » » » »	
» » » » »	» » » » »	» » » » »	» » » » »	
Ն. ԲԱյազենի ՀԱՅՈՒ ԳՐԱՊԱՐԱՆՆԵՐ » » » » »	ԹԲԿԱՐՆԵՐ ԽԵՆԴՐ	1/10.000 » » » » »	180—200 » » » » »	
» » » » »	ԹԲԿԱՐՆԵՐ ԽԵՆԴՐ	1/10.000 » » » » »	160—180 » » » » »	
» » » » »	» » » » »	1/10.000— 1/10.000	78—160 » » » » »	
» » » » »	» » » » »	1/10.000	» » » » »	

ρ_{gas}	$1/10,000 -$	68—160	ζ_{gas}	η_{gas}
ζ_{gas}	$1/10,000$	65—120	ρ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	68—110	ζ_{gas}	η_{gas}
ρ_{gas}	2	84—108	ζ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	44—46	ρ_{gas}	η_{gas}
ζ_{gas}	2	30—90	ζ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	144—165	ρ_{gas}	η_{gas}
ρ_{gas}	$1/10,000$	82	ζ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	120—160	ζ_{gas}	η_{gas}
ζ_{gas}	2	1/10,000	ρ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	1/100,000	ζ_{gas}	η_{gas}
ρ_{gas}	2	1/100,000	ρ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	1/10,000— 1/10,000,000	ζ_{gas}	η_{gas}
ζ_{gas}	2	140—200	ζ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	100—130	ρ_{gas}	η_{gas}
ρ_{gas}	2	98—110	ζ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	110—130	ρ_{gas}	η_{gas}
ζ_{gas}	2	72—94	ζ_{gas}	η_{gas}
η_{gas}	2	80—96	ρ_{gas}	η_{gas}

հատկություն: Մեր կազմակերպած գիտական արշավանքում բաս Տերների սրոշվել է կաթնաթթվային բակտերիաների բարձր թթվություն առաջացնելու հատկությունը: Փորձարկման ժամանակ, այդ կաթնաթթվային բակտերիաները կաթնային սննդանյութի վրա, համապատասխան պայմաններում, տաս օրվա ընթացքում առաջացրել են բարձր աստիճանի թթվություն: Այդ անալիզների արդյունքները բերված են 4-րդ աղյուսակում:

Թթվամորի նմուշի համապատասխան նոուրացումների միկրոբիոլոգիական պատկերը ցույց է տվել կաթնաթթվային ձողիկների և զիպլոկոկիերի առկայությունը: Լուս Տերների մինչ 120°-ի թթվության դեպքում մենք հանդիպում ենք զիպլոկոկիերի, իսկ 120°-ից բարձր, մինչև 394°-ը՝ ձողիկների: Շրջանային հացի գործարանների թթվամորների մեջ գլխավորապես գըանը վում են բարձր աստիճանի թթվություն առաջացնող կաթնաթթվային բակտերիաներ, իսկ ցածր աստիճանի թթվություն առաջացնողները գանվում են կոլոնիզների կողմից թլավոլավաշի թթվաշի թթվամորի մեջ: Մի քանի նմուշներում մենք հայտնաբերել ենք գազ առաջացնող բակտերիաներ: Այդ բակտերիաների իդենտիֆիկացիան ցույց է տվել որ գրանք պատկանում է Bact. aerogenes խմբին:

Հետազոտությունների ընթացքում հայտնաբերվել են կաթնաթթվային բակտերիաներից այնպիսիները, որոնք առաջանում են տիպիկ կաթնաթթվային խմորում և իրենց բիոքիմիական ու մորֆոլոգիական հատկություններով պատկանում են Streptobacterium plantarum և մածնի ձողիկների խմբերին: Հիշյալ բակտերիաներն առաջացնում են կաթնաթթու, որի աղցեցությամբ խմորը փխրուն է զառնում: Կաթնաթթվային բակտերիաներից մի քանիսը, բացի կաթնաթթվից, առաջացնուեն նաև այլ թթուներ՝ քացախաթթու և այլն, որոնք հայտնաբերվել են միկրոբիոլոգիական ցանքերի ժամանակ: Խմորի միեր բորբոքիան բնութագրելիս՝ Մելիքերը (Селибեր, 1936) հատապում է թթու և գազ առաջացնող բակտերիաների գերը խմբը: Եթե փիլորունացման գործում:

Մի շաբաթ գիտա-հետազոտական հիմարկներ, օրինակ՝ Անինգրադի հացի արեսաի կենտրոնական լաբորատորիան (աշուքայի խմորի), հացի արդյունաբերության գիտա-հետազոտականստիտուտի միկրոբիոլոգիայի լաբորատորիան և Հայաստան պայմաններում խմորների ու թթվամորների վերաբերյալ մեր կա-

տարած հետազոտությունները հաստատում են այն անվիճելի փաստը, որ նորմալ թթվամորների մեջ գտնվում են շաքարամներ և կաթնաթթու առաջացնող բակտերիաներ:

Սովորական գիտնականները մեծ ուշադրություն են դարձնում հացը բնական կոմպլեքս նյութերով հարստացնելու վրա. այդ կապակցությամբ մշակվել են մի շարք մեթոդներ: Երանք առաջարկում են հացի որակը բարձրացնելու համար և որպես վիտամինների աղբյուր, օգտագործել շաքարասնկերն ու կաթնաթթվային բակտերիաները (Առեւբան—Այերման, 1948; Կրետովիչ—Կրետովիչ, 1948; Օստրովսկի—Օստրովսկի, 1948).

Օդինցովան, Տրոֆանովը, Սովորակը և Մեյսելը հացաթթվաման մեջ վիտամիններով հարուստ շաքարասնկեր կիրառելու վերաբերյալ կատարել են հետաքրքրական աշխատանքներ, որոնք ունեն մեծ հեռանկարներ (Мейсель, 1944; Одинцова, 1943; Советов, 1944; Труфанов и др., 1941).

Մեր աշխատանքի պրոցեսում վերցված զանազան թթվամորների 199 նմուշից հաջողվել է մեկուսացնել 411 շատամ շաքարասնկեր, որոնք պատկանում են շաքարասնկերի տարրեր խմբների (տես աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Հետազոտված թթվամորնե- րի թիվը	Մեկուսաց- ված շաքա- րասնկեր	Որոնցից (աբուհայտված տոկոսներով)			
		Sacch. cerevisiae	Sacch. minor	Torulopsis	Mycoderma
199	411	50,7	21,1	18	9,9

Նոր Բայազետի, Աւեանի, Աշտարակի, Թալինի, Դիլիջանի, Իջևանի և Ախտայի շրջանների թթվամորները համեմատարար իվելի շատ են պարունակում հացաթթվան տիպիկ շաքարասներ—Sacch. cerevisiae, սակայն Աղաւանի շրջանի թթվամորները թե շաքարասնկերով և թե կաթնաթթվային միկրոօրգանիզմներով աղքատ են (տես 6 աղյուսակը): Այդ շրջանի շաքարասնկային միկրոֆլորան կազմված է Sacch. minor-ից, Torulopsis-ից, Mycoderma-ից, իսկ կաթնաթթվային միկրոֆլորան կազմված է պլազմապահու Streptococcus lactis-ի քիչ ակտիվ շատամ-

Ներից: Կողմանակի միկրոֆլորան կազմված է գլխավորապես Sarcina-ի, Mucilaginosa-ի, Bac. mycooides-ի, Bas. subtilis-ի և Bac. mesentericus-ի խմբերից: Հաճախակի հանդիպում ենք գարեջրերադցուի ագարի վրա աճած Actinomyces ներին:

Ախտայի և իջևանի շրջանների թթվամորները, բացի Saccharomyces-ից, հարուստ են նաև փառածին շաքարամսկերով Torulopsis-ներով: Ն. Բայազետի և Սևանի շրջանների թթվամորների միկրոֆլորան ավելի մոտիկ է կուլտուրական թթվամորներին:

Աղյուսակ 6

Հայկական ՍՍՌ-ի գանազան շրջանների հացի թթվամորներում
միկրոօրգանիզմների առկայության աստիճանը

Շրջանի անունը	Նմուշների քանակը	Միկրոօրգանիզմների առկայությունը		
		Շաքարա- սնկեր	Բակտերիա- ներ	Կաթնաթըթ- վային բակ- տերիաներ
Ն. Բայազետ Սևան	30	+++	++	+++
Ախտա	30	+++	+++	+++
Դիլիջան	30	++	++	++
Աղստարակ	20	++	++	++
Թալին	20	++	+++	+
Իջևան	19	+	+++	±
Ապարան	30	±	+++	±

Մանոթություն + միկրոօրգանիզմների առկայությունը
- միկրոօրգանիզմների բացակայությունը

Շաքարասնկային միկրոֆլորան կազմված է գլխավորապես Saccharomyces cerevisiae-ից և Sacchar. minor-ից, իսկ կաթնաթըթվային բակտերիաների մի զգալի մասը պատկանում է ձողաձեւերին: Իդենտիֆիկացիայից հետո պարզվեց, որ այդ բակտերիաները պատկանում են Bact. lactis acidi L.-ին, Str. plantarum և մածնի ձողիկների խմբերին:

Թալինի և Դիլիջանի շրջանների թթվամորները հացաթխիչ միկրոֆլորայով համեմատաբար աղքատ են, սակայն հարուստ են կաթնաթըթվային բակտերիաներով:

Մատցված տվյալներից երկում է, որ տարբեր շրջանների էկոլոգիական պայմանները տարբեր կերպ են աղքում թթվամորների միկրոֆլորայի թե ընդհանուր քանակի և թե ֆիզիոլոգիա-

ան կազմի վրա: Հացի մեկուսացված շաքարասնկերի խմորման ատկությունն ուսումնասիրելու համար նրանք փորձարկվել են փունքարի անոթներում գարեջըի քաղցուի վրա խմորումից հետո, որում է առաջացած նստվածքը, թափանցիկությունը, ապա այդ շաքարասնկերից ընտրվել են լավագույնները և հետագա լում մանրամասն ուսումնասիրվել են ընտրված այդ շաքարասնկերի ըիրքիմիական ու մորֆոլոգիական հատկանիշները, ինչպես նաև նրանց խմորման վերաբարձ ուժը:

Վերոհիշյալ մեջբերումներն ամփոփելով՝ կարող ենք անել հետեւյալ հիմնական նյութակացությունները.

1. Առանձին շրջանների էկոուսիական պայմանները խիստ աղղում են հացի թթվամորների միկրոֆլորայի վրա:

2. Հետազոտված շրջանների թթվամորների միկրոֆլորան կաղմված է շաքարասնկերից, կաթնաթթվային բակտերիաներից և այլ կողմնակի միկրոօրգանիզմներից:

3. Հացի արտադրության ընթացքում միկրոբիոլոգիական պրոցեսը համեմատաբար ինտենսիվ է կատարվում գարու ալյուրից պատրաստված խմորի մեջ, քանի ցարենի ալյուրից պատրաստվածի մեջ:

4. Նոր Բայազետի և Սևանի շրջանների թթվամորներն իրենց միկրոֆլորայի բնույթով ավելի մոտիկ են կուլտուրական թթվամորին: Այդ թթվամորների շաքարասնկային միկրոֆլորան կաղմված է զլիավլորապես Sacch. cerevisiae-ից, Sacch. minor-ից, իսկ կաթնաթթվային բակտերիաները, որոնք զգալի մաս են կազմում, պատկանում են Bact. lactis acidi L., Str. plantarum-ին և մածնային ձողիկներին:

5. Զանազան թթվամորների 199 նմուշից մեկուսացվել է 411 շաքարասնկերի շտամ, որից $50,7\%$ -ը կաղմում են Sacch. cerevisiae, $21,1\%$ Sacch. minor, $18,0\%$ Torulopsis և $9,9\%$ -ը փառածին շաքարասնկերի:

6. Բարձր թթվություն առաջացնող բակտերիաներ հանդիպում են շրջանային գործարանի թթվամորների մեջ, իսկ ցածր թթվություն առաջացնողները՝ կոլոնիկների կողմից օգտագործվող լավաշի թթվամորների մեջ:

7. Հացի արտադրության մեջ խմորի հասունացման պրոցեսում 2—3 ժամվա ընթացքում միկրոօրգանիզմների զարգացման հետ կատարվում են նաև ֆերմենտատիվ պրոցեսներ, որոնք են արագացնում են խմորի հասունացումը:

8. Թալինի ու. Դիլիջանի շրջանների թթխմորները պարունակում են գլխավորապես Sacch. minor, Torulopsis և փառածին շաքարասնկեր:

9. Իջևանի և Ապարանի շրջանների թթխմորների օգտակար միկրոֆլորան չափագույն է:

10. Մի քանի թթխմորներ, ըստ իրենց միկրոֆլորայի բնույթի ինքնարերական ծագում ունեն: 11.

11. Նշված շրջանների թարմ թթխմորների մեջ շաքարասնկերի և կաթնաթթու առաջացնող բակտերիաների առկայությունն անվիճելի է:

12. Հայաստանի հիշյալ շրջաններում թխվող հացի որակրքարձրացնելու համար, որպես խմորիչներ պետք է օգտագործել ընտելացված շաքարասնկային և կաթնաթթվային կուլտուրաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Այզրման Լ. յ.—1946. Повышение пищевой ценности хлеба. Москва.
 Այզրման Լ. յ.—1948. Технология хлебопечения. Москва.
 1943. Обогащение хлебных изделий белками дрожжей. ВНИИХП. Пищевая промышленность, вып. 3—4.
 Иванов Н.—1947. Проблема белка в растениеводстве. Москва.
 Козмина Н. и Кретович В.—1944. Химия зерна и продуктов его переработки. Москва.
 Кретович В. Л.—1948. Проблема пищевой полноценности хлеба. Ленинград.
 Мейсель М.—1944. Обогащение дрожжей витаминами. Пищевая промышленность, вып. 9.
 Николаев В. А.—1932. К микробиологии хлебных заквасок. Москва.
 Николаев В. А.—1937. Дрожжевая микрофлора хлебных заквасок. Москва.
 Одинцова Е.—1943. Синтез витамина В₁ культурными дрожжами из тиазола. ДАН, вып. 41.
 Опарин А. И.—1938. Биохимия хлебопечения. Сборник I.
 Островский А. И.—1948. Жидкие пекарские дрожжи. Москва.
 Плотников М. Г.—1940. Пшеничные закваски. Труды цент. лаб. Ленингр. Треста Хлебопечения, вып. IV.
 Саруханян Ф. Г.—1946. К биологии хлебных дрожжей Армянской ССР. Микроб. сборник, вып. II, Ереван.
 Селшбер Г.—1936. Приготовление пшеничного хлеба на чистых культурах молочнокислых бактерий. Известия научного Института им. Лесгафта, вып. 3.
 Спиридонова М. Г. и другие—1939. Молочнокислые бактерии. жидких дрожжей. Москва.

Советов С.—1944. Обогащение хлеба витаминами группы В. Москва.
Труфанов А. и другие—1941. Обогащение дрожжевых экстрактов витаминами В и С. Пищевая промышленность, вып. 12.

Փ. Գ. Սարսահան և Ա. Գ. Սևոյան

О микрофлоре хлебных заквасок и теста

Резюме

Хлебопекарное производство в своей основе представляет комплекс химико-микробиологических процессов.

Как и в других областях науки, в вопросах технологии приготовления хлебного теста ведущая роль принадлежит советским исследователям. Но, несмотря на богатые литературные данные по технологическим и биохимическим процессам хлебопечения, мы имеем очень скудные данные по изучению микрофлоры хлебных заквасок нашего необъятного Союза, если не считать работы Николаева. Исходя из этого, Сектор Микробиологии Академии Наук Армянской ССР, еще в годы Отечественной войны, начал заниматься изучением микрофлоры хлебных заквасок районов Армянской ССР. Предварительное сообщение об этих работах нами сделано в 1946 году (Саруханян, 1946).

Результаты наших работ показали разнообразие микроорганизмов в хлебных заквасках в районах, находящихся в различных экологических условиях. Поэтому в дальнейшем, для изучения микрофлоры заквасок, мы избрали районы, расположенные в различных географических зонах Армении. В настоящей работе мы осветили микрофлору хлебных заквасок следующих районов: Апаранский, Ахтinskий, Севанская, Н. Баязетский, Диличанский, Иджеванский, Талинский и Аштаракский.

Изучение микрофлоры хлебных заквасок и теста этих районов дало следующие результаты:

1. На микрофлору хлебных заквасок влияют экологические условия данного района.

2. Микрофлора заквасок этих районов состоит из дрожжевых грибков, молочнокислых бактерий и различных других микроорганизмов.

3. Микробиологические процессы во время производства хлеба интенсивнее происходят в тесте из ячменной муки, чем из пшеничной.

4. Наиболее приближаются по своей микрофлоре к культурным закваскам закваски Н. Баязетского и Севанского районов. Дрожжевая микрофлора этих заквасок состоит главным образом из *Saccharomyces cerevisiae*, *Sacch. minor*, а значительная часть молочнокислых бактерий относится к *Bact. lactis acidi*, *Str. plantarum* и мачунной палочке.

5. Высоко-кислотообразующие бактерии встречались в заквасках хлебозаводов районных центров, а малоактивные в заквасках колхозников, выпекающих национальный хлеб — лаваш.

6. Закваски Талинского, Диличанского районов содержат из дрожжевых грибков главным образом *Sacch. minor*, *Torulopsis* и плеччатые дрожжи.

7. Наибедны в отношении полезной микрофлоры закваски Апаранского и Иджеванского районов.

8. Исходя из проведенных исследований, можно считать бесспорным наличие в нормальной закваске дрожжевых грибков и бактерий, образующих молочную кислоту.

9. Некоторые закваски по своей микрофлоре имеют спонтанное происхождение.

10. В процессе нашей работы из 199 образцов различных заквасок нам пришлось выделить 411 штаммов дрожжевых грибков, из коих оказались: 50,7% *Saccharomyces cerevisiae*, 21,1% *Saccharomyces minor*, 18% *Torulopsis* и 9,9% плеччатые дрожжи.

11. Проведенные нами микробиологические анализы процессов хлебного производства показывают, что в течение 2—3-х часов в процессе созревания теста, наряду с развитием микроорганизмов, происходит также энзиматический процесс, что и ускоряет подъем теста.

12. Для повышения качества хлеба в изучаемых нами районах должны быть внедрены как разрыхлители теста адаптированные культуры дрожжевых грибков и молочно-кислых бактерий.